

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

«Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ

21.11.2016թ. խորհրդի նիստի

Նախագահ՝ Ֆ. Յուլակյան

Քարտուղար՝ Մ. Խաչատրյան

Խորհրդի 24 (քսանչորս) անդամից ներկա էին 18-ը (տասնութ):

ՕՐԱԿԱՐԳ

1. ԳՊՄԻ ՊՈԱԿ-ի 2016թ. փոփոխված ծախսային նախահաշվի քննարկում:

Ջեկ.՝ ռեկտորի ԺՊ Ս. Մինասյան

2. 2016թ. հոկտեմբերի 27-ին «Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ-ում ՀՀ վարչապետի վերահսկողական ծառայության կողմից կատարված ուսումնասիրության արդյունքերի ներկայացում:

Հաղ.՝ ՀՀ ԿԳՆ փոխնարար Մ.Մկրտչյան

ԳՊՄԻ ՊՈԱԿ-ի խորհրդի նախագահ Ֆ. Յուլակյանը, բացելով նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

ՔՎԵԱՐԿՆԵՑԻՆ – 18 անդամ. կողմ՝ 18, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Ֆ. Յուլակյանը շնորհավորեց ներկաներին՝ բուհի կազմակերպաիրավական կարգավիճակի փոփոխման կապակցությամբ: Նա նաև շնորհավորեց պարոն Ս. Մինասյանին՝ ռեկտորի պաշտոնը ստանձնելու կապակցությամբ և մաղթեց հաջողություններ: Նա հույս հայտնեց, որ ցանկացած նախաձեռնություն կունենա բարեհաջող ընթացք, քանի որ դրա համար կան բոլոր նախապայմանները: Նա, օրակարգի առաջին հարցն ընթերցելուց հետո, խոսքը փոխանցեց պարոն Ս. Մինասյանին:

1.ԼՍԵՑԻՆ.- ԳՊՄԻ ՊՈԱԿ-ի 2016թ. փոփոխված ծախսային նախահաշվի քննարկում (զեկ.՝ ռեկտորի ԺՊ Ս. Մինասյան)

Ս. Մինասյանը հակիրճ ներկայացրեց նախահաշվում համապատասխան փոփոխություններ կատարելու հետևյալ շարժառիթները՝

1. Բուհի ռազմավարական ծրագրում, ինչպես նաև խորհրդի նախորդ որոշմամբ նախանշված է եղել 2016թ. ընթացքում աշխատավարձի բարձրացում: Աշխատավարձի բարձրացման չափորոշիչը սահմանված է եղել 20 տոկոս՝ ընդհանուր հիմունքներով և առանձին մասնաբաժնով առանձնացված է եղել ուսումնառության համակազմը: Բարձրացումն իրականացվել է նվազագույնը 23, առանձին պարագաներում՝ 47 տոկոսով: Ամբիոնի վարիչի հավելավճարը նախկինում կազմել է 30 000 (երեսուն հազար) ՀՀ դրամ, իսկ ներկայումս՝ 70 000 (յոթանասուն հազար) ՀՀ դրամ: Ստացվում է, որ խորհրդի կողմից 2016թ. փետրվարի 9-ին հաստատված նախահաշվում անհրաժեշտ էր իրականացնել համապատասխան փոփոխություն՝ տնտեսական տարին առանց նախահաշվի առանձին հոդվածների գերաժախսի փակելու համար:

2. ՀՀ-ում միակ բուհը, որտեղ պատրաստում են նախնական գինվորական պատրաստության մասնագետ-մանկավարժներ, ԳՊՄԻ-ին է: Նախագորակոչային պատրաստության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնը՝ որպես առանձին ստորաբաժանում, գործունեության 24 տարվա ընթացքում աշխատել է աղետից առաջ կառուցված, հետո մասնակի վերակառուցված նախկին հանրակացարանային մասնաշենքում, որում աշխատանքային պայմանները եղել են անբավարար: Ամբիոնը տեղափոխվել է նոր մասնաշենք՝ ԳՊՄԻ-ի կառուցվածքի մեջ մտնող Գյումրիի «Մշակույթի վարժարան» ՊՈԱԿ-ի նախկին ննջարանային մասնաշենք (հանրացակարան), որը մասնակիորեն վերակառուցվել է և այժմ ևս վերակառուցման աշխատանքները շարունակվում են, որովհետև նախանշվում է նաև ամբիոնի աշխատանքների լիարժեք ծավալման առումով շարահրապարակ, բացօթյա մարզական հրապարակ և այլն: Արդեն 3 ամիս է, ինչ ամբիոնն աշխատում է առաջնակարգ պայմաններ ունեցող նոր մասնաշենքում: Հարկ է նշել, որ նույն մասնաշենքի առաջին հարկում նախատեսված է կատարել վերանորոգման, վերակառուցման աշխատանքներ, որով առանձնացվում է նախնական 5-6 հյուրանոցային համար: Այդ սենյակները ծառայելու են բուհում ուսուցանվող մասնագիտությունների համար քաղաքում անհրաժեշտ պրոֆեսորադասախոսական կազմի անբավարար լինելու պարագայում հրավիրվող դասախոսներին անհրաժեշտ

կացարանով ապահովելու խնդրի լուծմանը: ՀՀ կրթության և գիտության նախարարություն է ներկայացվել նոր մասնագիտությունների հայտ-պահանջը, որի հաստատվելու պարագայում բուհը անտարակույս կունենա պարբերաբար հրավիրվող դասախոսներ մայրաքաղաքից և ՀՀ այլ վայրերից: Բացի դրանից՝ քննարկվել է, որ հետայսու, առաջնորդվելով «1 ազգ-1 բանակ» կարգախոսով, առավել ուշադրության կենտրոնում կպահվեն նախագորակոչային պատրաստության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի աշխատաքները և հնարավորություն սկստեղծվի գիշերակացի՝ ՀՀ-ում զինվորական գործի առումով նշանավոր անձանց հրավիրելու, ուսանողների հետ համապատասխան աշխատանքներ ծավալել համար և այլն:

3.Բուհի նախկին հանրակացարանային մասնաշենքի առանձին հատված վերանորոգվելու է: Որպես հանրակացարանային մասնաշենք՝ նախատեսվում է առաջին, երկրորդ ու երրորդ հարկերի վերակառուցման ու կահավորման աշխատանքների իրականացումը, ինչը հետապնդում է հատկապես Ջավախքի հետ նախկին կապերի վերականգնման, ջավախքահայությանը Գյումրի քաղաքում ուսանելու հնարավորության ընձեռնման նպատակը: Այս փոփոխությունների մանրամասները խորհրդին կներկայացվի հաջորդ տնտեսական տարվա սկզբին կամ այս տարվա ավարտին, երբ պարզ կլինի նաև ծախսային մնացորդը: Հանրակացարանային հատվածի վերակառուցումը և վերազինումը 50-ից 60 ուսանողի գիշերակացի և ապրելու հնարավորություն կընձեռի:

Ավելին, ՀՀ Շիրակի կենտրոնից առավել մեծ հեռավորության վրա գտնվող երեխաների, ուսանողների տեղաշարժը, հատկապես II հերթի պարապմունքների անցկացման պարագայում, ինքնին տրանսպորտային միջոցների երթևեկության ժամանակացույցով պայմանավորված՝ առաջացնում է դժվարություններ: Այսինքն՝ հանրակացարանային մասնաշենքի վերակառուցումը հրամայական է, որովհետև համալսարանն ունի ընդլայնվելու լայն հնարավորություններ:

4.Մասնակիորեն կատարվել են ԳՊՄԻ-ի շենքի վերանորոգման աշխատանքներ:

Այս ամենով պայմանավորված՝ նախահաշվից պահանջվում է ծախսերի ավելացում, ինչը հնարավոր է 2016-2017 ուստարվում բուհի հեռակա ուսուցման համակարգ, ինչպես նաև մագիստրոսի կրթական ծրագրով առաջին կուրս ընդունված ուսանողների թվաքանակի աճի շնորհիվ: Այսինքն՝ կա հնարավորություն

առանց որևէ ծախսային մասերի արհեստական կամ իրավիճակային կրճատման, պահպանել բարձրացված աշխատավարձը և նույն չափով նաև ապահովել 2016թ. դեկտեմբեր ամսին 13-րդ աշխատավարձը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Խորհրդի նախագահ Ֆ. Յուլյանը, ՀՀ ԿԳՆ փոխնարար Մ.Մկրտչյանը, ԳՊՄԻ-ի մանկավարժության և սոցիալական աշխատանքի ամբիոնի պրոֆեսոր, ՀՀ ԿԳՆ «Գյումրու «Ֆոտոն» վարժարան» ՊՈԱԿ-ի տնօրեն Մ. Մովսիսյանը:

Ա. Մկոյանին հետաքրքրում էր, թե բուհի կազմակերպչաիրավական կարգավիճակի փոփոխմամբ պայմանավորված՝ սպասվո՞ւմ են մասնագիտությունների վարձավճարների փոփոխություններ:

Ս. Մինասյանը նշեց, որ հանրապետության այլ բուհերի համեմատ ԳՊՄԻ-ի մասնագիտությունների վարձավճարների չափաբաժինը անհամեմատ ցածր է: Բոլոր պարագաներում հաշվի է առնվել մարզի առանձնացող սոցիալական վիճակը: Անկախ մասնագիտությունից, կրթական ծրագրի տեսակից, որոնք նոր են ներդրվելու համալսարանում, համալսարանում հնարավորինս պահպանվելու է գործող միջին վարձավճարի չափը: Բուհի կազմակերպչաիրավական կարգավիճակի փոփոխումն ընձեռում է լրացուցիչ ծառայությունների մատուցման հնարավորություն, ինչն էլ կապահովի բուհին լրացուցիչ դրամական միջոցներով: Այս իսկ պարագայում, ռազմավարությունը տարվելու է այն ճանապարհով, որ սոցիալական վիճակի հետ կապված թռիչքային փոփոխություններ, վարձավճարի բարձրացումներ չգրանցվեն:

Ֆ. Յուլյանը նշեց, որ նախահաշվով նախատեսված գումարը եղել է մոտավորապես 1,096,200.0 ՀՀ դրամ և ծախսվել է 794,871.7-ը: Արդյունքում մնացել է 301,328.3 ՀՀ դրամ: Այսինքն՝ նախատեսված է եղել ամբողջը ծախսել, բայց մնացել է որոշակի գումար:

Ս. Մինասյանը նշեց, որ համալսարանի կառուցվածքի մեջ ներառված է ավագ դպրոց, վարժարան, միջին մասնագիտական կրթության բաժին: Իհարկե, ավագ դպրոցն ու քոլեջը նույն շենքում են, ունեն տեղափոխված ռազմական ամբիոն, գործող ընդամենը 1 տրանսպորտային միջոց /միկրոավտոբուս/, բայց կա նաև մեկ այլ տրանսպորտային միջոցի՝ ավտոբուսի ձեռքբերման անհրաժեշտություն: Նա նաև հավելեց, որ նախնական հաշվարկով խնայողություն չի կիրառվում հատկապես

ջեռուցման, էլեկտրոէներգիայի և ուսանողների փորձառության հետ կապված ծախսերի առումով:

Պարոն փոխնախարար Մ Մկրտչյանին հետաքրքրում էր, թե փոփոխությունների արդյունքում ո՞ր կողմերն են շահելու:

Ս. Մինասյանը նկատեց, որ փոփոխությունների արդյունքում շահում է բուհը, շահում է բուհի աշխատակիցը, քանի որ աշխատավարձերը բարձրացել են և կատարվել են բուհի ֆիզիկական տարածքի բարելավման լուրջ աշխատանքներ:

Մ. Մանուկյանի հաջորդ հարցը վերաբերում էր 2 ավագ դպրոց պահելու հիմնավորված լինելուն:

Ս. Մինասյանը նշեց, որ 2 ավագ դպրոց չպահելը հրամայական է: Ավելին, դեռ 2 ամիս առաջ ինքը նամակ է ուղղել ՀՀ ԿԳ նախարար պարոն Լ. Մկրտչյանին, որով խնդրել է թիվ 3 ավագ դպրոցը միացնել ԳՊՄԻ-ի 2 դպրոցներին: Արդյունքում կշահեն 3 դպրոցը: Նույն թիվ 3 ավագ դպրոցը փակման եզրին է՝ պայմանավորված սակավաթիվ աշակերտներով: Առանձնացված մասնաշենքը լիովին հնարավոր կլինի վերածել յուրօրինակ լաբորատորիաներով զինված մասնաշենքի՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ բուհն ունի համապատասխան պահեստավորված գույք:

ՀՀ ԿԳ նախարարից ստացված պատասխան նամակում նշված է, որ կա ավագ դպրոցների օպտիմալացման խնդիր և հարցը կքննարկվի առաջիկայում: Նա նաև հավելեց, որ ավագ դպրոցում և վարժարանում ունեն հայտարարված մրցույթներ, պահում են ԺՊ-ներ՝ նկատի ունենալով միավորումը: Մրցույթների արդյունքում կընտրվեն առավել արժանիները և արհեստածին կրճատման երևույթներ չեն արձանագրվի:

Մ. Մովսիսյանը հետաքրքրվեց բուհի տեխնիկական հագեցածության հարցի կարգավորմամբ:

Ս. Մինասյանը նշեց, որ բուհը մասնակցում է ՀՀ ԿԳՆ «Կրթական ծրագրերի կենտրոնի» կողմից Համաշխարհային բանկի «Կրթության բարելավում» վարկային ծրագրի շրջանակներում իրականացվող մրցույթին՝ բավականին ստեղծարար հայտ-ծրագրի ներկայացմամբ: Պլանավորված է առավելագույնը 2-3 ամսում ունենալ հեռավար ուսուցման 3 լաբորատորիա: Մասնավորապես նիստերի դահլիճն իր տեսակով եզակի է լինելու մարզում, այն զինվելու է թարգմանչական խցիկներով: Բացի դրանից՝ բուհն ունենալու է երկու հեռահար ուսուցման լսարան: Լսարանները

ծառայելու են բուհի ներքին ու արտաքին շահակիցներին: Ընդ որում՝ այդ լսարաններում կազմակերպվելու են տարաբնույթ դասընթացներ /ոչ միայն ՄԿԾ առարկայական ցանկին համապատասխան/՝ նպաստող շահակիցների հոգևոր, մշակութային զարգացմանը:

Մ. Մկրտչանը նկատեց, որ հեռավար ուսուցման պարագայում կա լուրջ խնդիր: Թվում է, թե հարցը սարքավորումներն են, բայց իրականում խնդիրը մանկավարժական է: Ենթադրենք, թե Գյումրիից մի լավ դասախոս դաս է վարում գյուղական դպրոցների ուսուցիչների, աշակերտների համար: Գործընթացի արդյունավետության ապահովման համար այդ դպրոցում պետք է լինի մեթոդաբան:

Ս. Մինասյանը համաձայնեց, որ կա մասնագետների պակաս: Մա գերխնդիր է, որովհետև մեթոդաբանությունն ապահովում է որակյալ կրթական միջավայրի առնվազն 40 տոկոսը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաստատել ԳՊՄԻ ՊՈԱԿ-ի 2016թ. փոփոխված ծախսային նախահաշիվը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ – 18 անդամ. կողմ՝ 18, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

2.ԼՍԵՑԻՆ.- 2016թ. հոկտեմբերի 27-ին «Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ-ում ՀՀ վարչապետի վերահսկողական ծառայության կողմից կատարված ուսումնասիրության արդյունքների ներկայացումը (**հաղ.**՝ ՀՀ ԿԳՆ փոխնարար պարոն Մ.Մկրտչյան):

Մ.Մկրտչյանը նշեց, որ բուհում ուսումնասիրություններ կատարելու հիմք է ծառայել ՀՀ Ազգային ժողովի 2016 թվականի հոկտեմբերի 26-ի նիստում պատգամավոր Վահե Էնֆիաջյանի կողմից ներկայացված տեղեկատվությունը:

Փոխնախարարն անդրադարձավ «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի նոր կանոնադրությանը գիտական խորհրդի անդամների իրազեկվածության խնդրին: Նա նշեց, որ խախտվել է գործող կանոնադրության 18-րդ կետի պահանջները, քանի որ կառավարման խորհրդի նիստ չի գումարվել և չի ներկայացվել լիազոր մարմնին: Կանոնադրության նշված դրույթի պահանջը չի կատարվել, կանոնադրության նախագիծը ՀՀ ԿԳ նախարարություն է ուղարկվել ռեկտորի պաշտոնակատարի կողմից հղում կատարելով գիտխորհրդի որոշումը, ինչը եղել է սխալ մոտեցում:

Այդ հարցի կապակցությամբ Ս.Մինասյանը իր պարզաբանումների մեջ նշել է, որ վերջին 6 տարվա ընթացքում ՀՀ ԿԳ նախարարությունն դիմելուց առաջ կազմակերպաիրավական կարգավիճակի և կանոնադրության փոփոխման հարցը քննարկվել է բացառապես բուհի գիտխորհրդում և, առաջնորդվելով ընդունված նախադեպով, ս.թ. օգոստոսի 3-ին հարցի քննարկումը կազմակերպվել է գիտխորհրդի նիստում՝ առցանց ձևաչափով՝ նախապես գիտխորհրդի անդամներին ուղարկելով կանոնադրության քննարկվող տարբերակը: Այնուհետև ՀՀ ԿԳ նախարարություն է ուղարկվել համաձայնության արժանացած կանոնադրության նախագիծը և արձանագրությանը կից՝ համաձայնության թերթիկը:

Ինչ վերաբերում է կանոնադրությունը գիտխորհրդի անդամներին ներկայացնելուն, խնդիրն ունեցել է տարիների պատմություն, բոլորը հիմնադրամի կանոնադրությանը քաջատեղյակ են եղել:

Փոխնախարարը հավելեց, որ գործընթացը հնարավոր էր իրականացնել նաև բացառապես հիմնադրի որոշմամբ՝ առանց բուհի համաձայնության, համաձայն ԿԳ ռազմավարության:

Հաջորդ հարցը վերաբերում էր ԳՄՊԻ-ի նոր կանոնադրությունը ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարին հարմարեցնելուն, քանի որ սահմանվել է ռեկտորի ընտրության այնպիսի չափանիշ ինչպիսին է վերջին 15 տարում 10 տարվա վարչական աշխատանքի փորձի պահանջը, այսինքն սահմանվել է, որ ամբիոնի վարիչ պրոֆեսորը չի կարող ընտրվել բուհի ռեկտոր:

Ըստ ՀՀ ԿԳ փոխնախարարի հաղորդման, Շիրակի պետական համալսարանի (ՇՊՀ) կանոնադրության 56-րդ կետով ռեկտորին ներկայացվող պահանջները (գիտական աստիճան և վերջին 15 տարվա ընթացքում առնվազն 10 տարվա պետական կառավարման կամ բուհում վարչական աշխատանքի ստաժ) հարմարեցված չեն ռեկտորի ներկայիս ժամանակավոր պաշտոնակատարին. դրանք սահմանվել են նկատի ունենալով ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից դեռևս 2016 թվականի սկզբին մշակված և այսօր արդեն հանրային քննարկման դրված (այդ թվում նաև ռեկտորների խորհրդում) «Բարձրագույն կրթության մասին» ՀՀ օրենքի նախագծով /նախագծի հոդված 21-րդ/ բուհերի ռեկտորների վերաբերյալ առաջ քաշված մոտեցումները, որոնք բխում են միջազգային փորձից, Բոլոնիայի գործընթացի սկզբունքներից, ըստ որոնց ռեկտորը

հաստատության կառավարիչ է /մենեջեր/ և, հետևաբար, պետք է ունենա կառավարման ոլորտի և վարչական աշխատանքի փորձառություն:

Փոխնախարարը դրական գնահատեց ռեկտորի պաշտոնում փորձառու կրթության կազմակերպիչ-մենեջերի նշանակման փաստը:

Անդրադառնալով մագիստրատուրայի ընդունելության քննությունների գործընթացի կազմակերպման վերաբերյալ բարձրացված խնդրին, Մ.Մկրտչյանը նշեց, որ գործընթացն իրականացվել է ՀՀ ԿԳ նախարարի 2007թ. N1193-Ն հրամանով հաստատված՝ «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման կարգի» դրույթներին համապատասխան:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Խորհրդի նախագահ Ֆ. Յուլակյանը, ԳՊՄԻ ՊՈԱԿ-ի ռեկտորի ԺՊ Ս. Մինասյանը:

Պարոն Ս. Մինասյանը խորհրդի նախագահ Ֆ. Յուլակյանից խնդրեց ձայնի իրավունք և ելույթ ունեցավ:

Ս. Մինասյանն իր ելույթում նշեց, որ պարոն փոխնախարար Մ. Մկրտչյանն իր որակավորումների մեջ մեղմ անդրադարձավ մագիստրատուրայի ընդունելության գործընթացի խախտումներին: Այն, որ նախորդ տարիներին մագիստրատուրայի ընդունելությունն իրականացվել է ընդունելության քննություններով, հակասում է ՀՀ ԿԳ նախարարի 2007թ. N1193-Ն հրամանով հաստատված՝ «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման կարգի» մասնավորապես 3-րդ գլխի 9-րդ և 10 կետերին, ինչը մարդու սահմանադրական իրավունքների խախտում է: Նա հավելեց, որ առաջնորդվելով գործող կարգով՝ 255 ուսանող ընդունվել է մագիստրատուրա I կուրս՝ շուրջ 140-ով ավելի:

Հեռակա բաժնի ընդունելության քննությունների կազմակերպման և անցկացման գործընթացը նույնպես ուսումնասիրվել է ՀՀ ԿԳ նախարարության համապատասխան մասնագետի կողմից և խախտումներ չեն հայտնաբերվել: Արդյունքում, նախորդ տարվա համեմատությամբ, ընդունվել են շուրջ 80 դիմորդով ավելի:

Ֆ. Յուլակյանը նշեց, որ Ս. Մինասյանը փորձառու մենեջեր է՝ կրթության գիտակ, ով կարճ ժամանակահատվածում իրականացրել է մի շարք բարեփոխումներ.

ռազմական ամբիոնին նոր մասնաշենքի հատկացում, բուհի շենքի բարեկարգման աշխատանքներ, բուհի տեխնիկական զինմանն ուղղված աշխատանքների նախաձեռնում (մասնավորապես 3 հեռաուսուցման լաբորատորիա) և այլն:

Ֆ. Ցոլակյանը շնորհակալություն հայտնեց նախկին ռեկտոր Վ. Գրիգորյանին՝ կատարած աշխատանքի համար և հավելեց, որ այն ամենը, ինչ ունի սկիզբ, ունի նաև վերջ:

Եվ նշեց, որ ապագայի ճիշտ ռազմավարություն մշակելու համար պահի հրամայականն է ռեկտորի պաշտոնակատար Ս. Մինասյանի շուրջը համախմբվելը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաղորդված տեղեկատվությունն ընդունելի գիտություն:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Ֆ. ՑՈԼԱԿՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Մ. ԽԱՉԱՏՐՅԱՆ